ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԺԴԵՀ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Սյունիքի մարզ. գ. Նժդեհ հեռ. 094367000

24. 12. 2015թ

գ. Նժդեհ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգարժան մարզպետ.

Ձեզ է ուղարկվում ՀՀ Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի 2015թ-ի դեկտեմբերի 24-ին տեղի ունեցած ավագանու հերթական նիստի թիվ 12-Ա, թիվ 13-Ա, թիվ 14-Ա,թիվ 15-Ն և թիվ 16-Ն որոշումները:

Համայնքի ղեկավար Գ. Օհանյան

18 01 305

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Նժդեհ համայնք, 094367000, Nzhdehg@mail.ru

Որոշում թիվ 12-Ա
« 24» դեկտեմբերի 2015թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար՝ Գ. Օհանյանի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ – 4, դեմ՝ – 0, ձեռնպահ՝ – 0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի ավագանու 2015թ.-ի դեկտեմբերի 24-ի նիստի հետևյալ օրակարգը.

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրում
2. Նժդե համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
3. Նժդեհ համայնքի 2016թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
4. Նժդեհ համայնքի 2016թվականի բյուջեն հաստատելու մասին

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի ավագանու անդամներ՝

| Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| Ալինա Ծատուրյան | | |
| Ռուզաննա Դիլանյան | | |
| Զարինե Թանգյան | | |
| Շուշան Հակոբյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՂԱՄ ՕՀԱՆՅԱՆ

«24» դեկտեմբերի 2015թ.
Գ. Նժդեհ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Նժդեհ համայնք, գ. Նժդեհ . 094367000 , Nzhdeh@mail.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» դեկտեմբերի 2015թ N 13-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավար Գ.Օհանյանի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ – 4, դեմ -0, ձեռնպահ 0 քվեարկության արդյունքներով , Նժդեհ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նժդեհ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման ցանկը և համապատասխան ակտը:

Ցանկը կցվում է:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի ավագանու անդամներ՝

Կ ո ղ մ (4) Դ ե մ (0) Ձ ե ռ ն պ ա հ (0)

Ալինա Ծատուրյան

Ռուզաննա Դիլանյան

Զարինե Թանգյան

Շուշան Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՂԱՄ ՕՀԱՆՅԱՆ

«24» դեկտեմբերի 2015 թ.

գ.Նժդեհ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզի Նժդեհ գյուղական համայնքի
ավագանու 2015թ-ի դեկտեմբերի 24-ի թիվ 13Ա որոշման

# ՑԱՆԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԺԴԵՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ-Ի ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ

| Հերթական համարը | Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը | Թողարկման /կառուցման տարեթիվը/ | Համարը | | | Փաստացի առկայությունը | | Հաշվապահական հաշվառման տվյալներով | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | գույքային | գործարանային | անձնագրի | քանակը | արժեքը /դրամ/ | քանակը | արժեքը /դրամ/ | |
| 1 | Երկաթյա պահարան | | | | | 1 | 300 | 1 | 300 | |
| 2 | Դյուար | | | | | 1 | 357100 | 1 | 357100 | |
| 3 | Տնօրենի աշխատասեղան | | | | | 1 | 140000 | 1 | 140000 | |
| 4 | Տնօրենի աթոռ | | | | | 1 | 60000 | 1 | 60000 | |
| 5 | Գրապահարան | | | | | 1 | 64000 | 1 | 64000 | |
| 6 | Աթոռ | | | | | 6 | 11000 | 6 | 11000 | |
| 7 | Փափուկ կահույք | | | | | 1 | 180000 | 1 | 180000 | |
| 8 | Համակարգիչ Celeron E400, keyboard, mouse | | sdc 4-052 | | | 1 | 165750 | 1 | 165750 | |
| 9 | Մոնիտոր Monitor LCD 19 | | sdc 4-052/1 | | | 1 | 52920 | 1 | 52920 | |
| 10 | UPS 700 VA | | sdc 4-052/2 | | | 1 | 30400 | 1 | 30400 | |
| 11 | Տպիչ, սքաներ Laser Printer | | sdc 4-052/3 | | | 1 | 86800 | 1 | 86800 | |
| 12 | Համակարգիչ /սերվեր/ Intel Core i5 2300, keyboard, mouse | | sdc 4-052/4 | | | 1 | 294950 | 1 | 294950 | |
| 13 | UPS 700 VA | | sdc 4-052/6 | | | 1 | 30400 | 1 | 30400 | |
| 14 | Ներհամայնքային կամուրջ | | | | | 1 | | 1 | | |
| 15 | Նախկին կապի շենք | | | | | 1 | | 1 | | |

Համայնքի ղեկավար՝ Գ.Օհանյան

Հաշվապահ՝ Ն. Թևանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Նժդեհ համայնք, 094367000, Nzhdehg@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» դեկտեմբերի 2015թ. N 14 – Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավար՝ Գ. Օհանյանի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ – 4, դեմ՝ – 0, ձեռնպահ՝ – 0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Նժդեհ համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:
Հավելվածը կցվում է:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի ավագանու անդամներ՝

Կ ո ղ մ (5) Դ ե մ (0) Ձ ե ռ ն պ ա հ (0)

Ալինա Ծատուրյան

Ռուզաննա Դիլանյան

Զարինե Թանգյան

Շուշան Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՂԱՄ ՕՀԱՆՅԱՆ

«24» դեկտեմբերի 2015թ.
գ. Նժդեհ

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Նժդեհի գյուղական
համայնքի ավագանու 2015թ-ի դեկտեմբերի 24-ի
N 14-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը ՝ 5

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ / ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 143900 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 73600 |

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 75600 |
| 4 | Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 74000 |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| 5 | Հանդապահ | 0.7 | 51520 |

Համայնքի ղեկավար Գ.Օհանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Նժդեհ համայնք, գ. Նժդեհ . 094367000 , Nzhdehg@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» դեկտեմբերի 2015թ N15 – Ն

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով, ինչպես նաև հիմք ընդունելով համայնքի ղեկավար Գ. Օհանյանի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ` – 4, դեմ` – 0, ձեռնպահ` – 0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի ավագանին որոշում է`

Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան` նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է`

- հիմնական օբյեկտների համար`

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար` մինչև 15000 դրամ

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 3000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 5000դրամ.

բգ) 1001- մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 15000 դրամ.

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ.

- ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության՝ 3000 դրամ

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի, ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով

գ) նախատեսվում է միայն կցակառույցների վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 5000 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է.

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ

գ) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000 դրամ

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000 դրամ
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ
դ) խաղատների կազմակերպման համար ՝ 500000 դրամ
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ
դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 դրամ:

9. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ:

10. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ:

11. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 3000 դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝

1. Աղբահանության վճար սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակիչի համար՝ ամսական 50 դրամ:

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500 դրամ:

13. Շինարարական ու խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրվող թույլատվության վճար՝ 2000 դրամ:

Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ընթացիկ տարում փոփոխության ենթական չեն:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի ավագանու անդամներ՝

Կ ո ղ մ (5) Դ և մ (0) Ձ ե ռ ն պ ա հ (0)

Ալինա Ծատուրյան

Ռուզաննա Դիլանյան

Զարինե Թանզյան

Շուշան Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՂԱՄ ՕՀԱՆՅԱՆ

«24» դեկտեմբերի 2015թ.

Գ. Նժդեհ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Նժդեհ համայնք, գ. Նժդեհ . 094367000 , Nzhdehg@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N16-Ն

„24„ դեկտեմբերի 2015թ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Գ.Օհանյանի առաջարկությունը, որոշման նախագիծը կողմ՝– 4, դեմ՝ – 0, ձեռնպահ՝ – 0 քվեարկության արդյունքներով Նժդեհ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Նժդեհ համայնքի 2016թ-ի բյուջեն՝ համաձայն հավելված 1-ի։

Եկամտային մաս՝ 4955,5.դրամ
Ծախսային մաս՝ 4955,5.դրամ
Դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0դրամ

Նժդեհ համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Ալինա Ծատուրյան

Ռուզաննա Դիլանյան

Զարինե Թանգյան

Շուշան Հակոբյան

Համայնքի ղեկավար՝ Գ.Օհանյան

„24„ դեկտեմբերի 2015թ
գ.Նժդեհ